ՀՀ ԿԳՄՍՆ «Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոց» ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա- *Ստեղծագործական կարողությունների զարգացումը առարկայի դասավանդման ընթացքում*

Դպրոց- Վայքի ավագ

Ուսուցիչ- Հայկուհի Մարկոսյան

Ղեկավար- Կիմա Օհանեսյան

ՎԱՅՔ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 3
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ 4
ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ 9
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 22
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 24
ՀԱՎԵԼՎԱԾ 1 25
ՀԱՎԵԼՎԱԾ 2 27

«Փորձը սովորեցնում է մեզ հասկանալ, որ անհավանականը ոչ միշտ է սխալ»: Ժան Ֆրանսուա Ռեց

ՆԱԽԱԲԱՆ

ԽՆԴԻՐ

Կրթական բարեփոխումները և հանրակրթական նոր չափորոշիչները ուսումնական գործընթացը կազմակերպելու պահանջները նորովի են դրել ուսուցիչների և սովորողների առջև:Ժամանակակից տեխնոլոգիաների և մեթոդների ներդրումը կրթական համակարգ հնարավորություն է տալիս սովորողին դառնալ դասի ընթացքի անմիջական նախագծողը, և արդյունքում բուն դասապրոցեսը դադարում է սովորողի համար լինել ձանձրալի, ավելին՝ սովորողը մոտիվացվում է, իսկ այդ մոտիվացիայի պատճառներից մեկն էլ աշակերտակենտրոն ուսուցումն է: Բարեփոխումների հիմքում է նաև սովորողների ստեղծագործ մտքի, նրանց մտածելու ու գործելու կարողության զարգացումն ու խթանումը:Սակայն զգալի և հասկանալի է, որ սովորողների մեծ մասը չի կարողանում ստեղծագործաբար մոտենալ դասապրոցեսին, տրված առաջադրանքին կամ իրավիճակին:Դիտարկումներն ու վերլուծությունները ցույց են տալիս, որ կրտսեր դպրոցում վառ երևակայությամբ և ստեղծագործ մտքով օժտված աշակերտների այդ կարողությունները սկսում են խամրել հիմնական դպրոցում, իսկ ավագում՝ իսպառ անհետանում են:Ինձ անհանգստացնում է ստեղծարար մտքի նվազ արտահայտումը դասապրոցեսում, որի բացակայությունը չի նպաստում վերլուծելու, համադրելու, տեղեկատվությունը վերափոխելու կարողության ձևավորմանը:Դպրոցն ավարտած սովորողը ստեղծագործական մտքի և երևակայության

բացակայությամբ բարձրագույն ուսումնական հաստատությունում դառնում է միջակ, ոչնչով աչքի չընկնող ուսանող, ապա նաև՝ մասնագետ:

Նպատակ

- Հստակեցնել ստեղծարարության և ստեղծագործականության սահմանումը:
- Ցույց տալ ուղիներ, որոնք կնպաստեն աշակերտների ստեղծագործական մտքի զարգացմանը:
- Ստեղծարար ծրագրերի և ստեղծագործ ուսուցիչների հետաքրքրությունը շարժելու միջոցով հասնել խնդրի լուծմանը:
- Հիմնավորել այն կարծիքը, որ ստեղծագործական միտք և ստեղծարար կարողությունները կարելի է զարգացնել ցանկացած առարկայի միջոցով և ցանկացած երեխայի հնարավորությունները ընդլայնելով:
- Հիմնավորել այն տեսակետը, որ ստեղծագործական միտքը կարելի է զարգացնել դաստիարակության միջոցով:

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Թեմայի արդիականությունը պայմանավորված է կրթական համակարգի բարեփոխումների արդի շրջափուլում չափորոշիչներով սահմանված վերջնարդյունքներով, համաձայն որոնց ուսուցիչն ամեն կերպ պետք է խթանի սովորողի ինքնուրույն մտածելու, կշռադատելու, կարծիք և դիրքորոշում հայտնելու, վերաբերմունք արտահայտելու, կարևորելու, որպես նախաձեռնող հանդես գալու, ստեղծագործաբար մտածելու ունակությունները՝ամեն կերպ խթանելով սովորողի ինքնուրույն գործունեության ցանկացած դրսևորում: Ուսուցիչը ամեն կերպ պետք է զարգացնի սովորողների ստեղծագործական մտածելակերպը, դասապրոցեսում և դրանից դուրս, ստեղծի այնպիսի իրավիճակներ, որոնք կնպաստեն ուսումնական գործունեության ստեղծագործականությանը, աշակետների երևակայական մտքի ձևավորմանն ու ստեղծարարության հիմնավորմանը:

Որպես կրթության բարձրագույն նպատակ է համարվում ինքնազարգացող անհատականության ձևավորումը, ով ընդունակ է համագործակցել համայնքի ստեղծագործական միջավայրի և դասընկերների հետ:

Խնդիրը սահմանելու համար ուզում եմ որպես ուղենշային գաղափար վերցնել հետևյալ ձևակերպումը , ***որ բոլոր մարդիկ էլ գործունեության այս կամ այն ոլորտում ունակ են գրանցելու ստեղծագործական նվաճումներ՝ ճիշտ պայմանների, համապատասխան գիտելիքների և հմտությունների առկայության պարագայում***:Պատասխանել այն հարցերին, թե կյանքի ո՞ր ոլորտներում և ի՞նչ նպատակների հասնելու համար է անհրաժեշտ ստեղծագործականությունը, ինչպես կարելի է զարգացնել սովորողների ստեղծագործական միտքը և գործունեությունը:Խնդրի լուծման ցանկությունը մեծ է և վաղուց է զբաղեցնում մեր միտքը: Դիտողականությունն ու դասապրոցեսների վերլուծությունը հանգեցրել է այն տեսակետին, որ ստեղծագործական ավելի մեծ միտք ու գործունեություն ունեն կրտսեր տարիքի սովորողները, միջին դպրոցում այդ կարողություններն սկսում են խամրել, ավագ դպրոցում՝ անհետանալ; Ո՞րն է պատճառը…

Ավելի հաճախ են հանդիպում սովորողներ, որոնք խուսափում են ինչ-որ ներկայացման մեջ ընդգրկվելուց, քննարկումների ժամանակ կարծիք արտահայտելուց, սեփական ստեղծագործական շարադրանքը ուրիշների ներկայությամբ կամ բարձրաձայն կարդալուց:

Խնդրի լուծման իրական ճանապարհը դասապրոցեսում է , խնդիրը լուծողը՝ համարձակ, նորարար ու ստեղծագործ ուսուցիչը:

Սակայն խնդրի լուծումն ամենից առաջ սկսվում է նրանից , թե ինչպես սահմանել «Ստեղծարարությունը կամ ստեղծագործականությունը»:

Ստեղծագործականությունը որպես ունակություն ինքնաարտահայտման ակտիվ ձև է, որը կարող է իրականացվել ցանկացած բանի միջոցով՝ բառ կամ շարժում, նկար կամ քանդակ, բանաստեղծություն կամ մեղեդի, էքսկուրսիա կամ քննարկում, բանավոր կամ գրավոր խելացի հարցադրում: Ստեղծագործական միտքը բաղկացած է նոր բան հորինելու, հնարելու ունակությունից, փոփոխություններ և նորամուծություններ ընդունելու ունակությունից, գաղափարների և հնարավորությունների փորձեր կատարելու ցանկությունից, աշխարհայացքի ճկունությունից, կատարելագործման ուղիների մշտական որոնումներից: Սա գործընթաց է,

որի ակնկալիքը բոլորովին նոր արդյունքի ստեղծումն է: Ելնելով այս մտքից՝ կարելի է հիմնավորել այն, որ ստեղծարարությունը և ստեղծագործականությունը պարզապես հոմանշային ոճական տարբերություն ունեցող բառեր են, որոնց վերջնարդյունքը նույնն է՝ստեղծել բոլորովին նոր արդյունք:

Ստեղծարարության յուրահատուկ սահմանում է ձևակերպել Կ.Շարփը՝ Անգլիայի կրթական հետազոտությունների ազգային հիմնադրամի աշխատակիցը.

Ստեղծարարության սահմանումը

Հեղինակը ներկայացնում է շատ տեսաբանների տեսակետներ ստեղծարարության սահմանման վերաբերյալ: Ընդհանրացնելով կարծիքները՝ նա ներկայացնում է ամենատարածվածները:

Ստեղծագործականության բաղադրիչներն են՝

- երևակայությունը
- ինքնատիպությունը
- արտադրողականությունը
- խնդիրների լուծումը
- արժեքավոր և պիտանի արդյունք ստանալու ունակությունը

Կ.Շարփի հոդվածում խոսվում է մանկահասակ երեխաների ստեղծարարության զարգացման վերաբերյալ կատարած ուսումնասիրությունների, ծրագրերի և այլ քայլերի մասին: Հոդվածագիրը հանգում է այն եզրակացության, որ առավել շատ շահում է այն կրթական համակարգը, որտեղ խնդրի լուծման ուղիները փնտրում են համակարգված և ներդաշնակ ստեղծարար ծրագրերի միջոցով:

Կարոլին Շարփը իր ուսումնասիրություններում փորձում է հիմնավորել մանկահասակ երեխաների ստեղծարարության զարգացման վերաբերյալ առկա հետազոտությունների և տեսությունների հիմնական գաղափարը:

Նա մեկնաբանում է ստեղծարարության սահմանումը՝ կարևորելով վերջինիս նշանակությունը մանկահասակ երեխաների միջավայրում աշխատողների համար, ինչպես նաև ներկայացնում է մանկահասակ երեխաների ստեղծարարության զարգացման մասին տարածված ոչ իրական պատկերացումները:

Նրա նպատակն է՝ բացահայտել այն սկզբունքները, որոնք վաղ մանկության տարիներին խթանում են մանկահասակ երեխաների ստեղծարարության զարգացումը:

Հոդվածը իր մեջ ներառում է հետևյալ ենթաբաժինները.

- Ինչպե՞ս է ստեղծարարությունը մեկնաբանվել կրթական քաղաքականության մեջ:
- Ստեղծարարության սահմանումը
- Մանկահասակ երեխաների ստեղծարարությունը
- Ինչպե՞ս է զարգանում ստեղծարարությունը:
- Ի՞նչ ազդեցություն է ունենում կրթությունը ստեղծարարության վրա:
- Ի՞նչ ազդեցություն կարող է ունենալ կրթական միջավայրը ստեղծարարության վրա:
- Ստեղծագործ մասնագետների դերը

Հոդվածագիրը մանրամասն հետազոտելով կրթական այն միջավայրը, որտեղ լրջորեն զբաղվում են երեխաների ստեղծագործական մտքի զարգացմամբ դեռ վաղ մանկությունից, առաջարկում է ստեղծագործականությունը որպես առանձին բաղադրիչ մտցնել անգլիական կրթական համակարգ:

Շարփը միևնույն ժամանակ կանգ է առնում ստեղծարարության վերաբերյալ հասարակության մեջ առկա թյուրըմբռնումներին՝ փորձելով հնարավորինս դրանք խմբավորել ըստ ընդհանրությունների:

Ստեղծարարության վերաբերյալ որոշ ոչ իրական պատկերացումներ



- Ստեղծարարությունը բնորոշ է միայն հումանիտար առարկաներին:
- Երեխաները հեշտությամբ կարող են մեկ ոլորտում սովորածը տեղափոխել մեկ այլ ոլորտ:
- Ստեղծագործելու գործընթացը զվարճանք է. այն չպետք է չափազանց լուրջ ընդունել:
- Ստեղծարարությունը, լինելով բնատուր առանձնահատկություն, տրված է միայն որոշ տաղանդավոր մարդկանց: Խիստ ստեղծագործ մարդիկ իրենց միշտ էլ այդպիսին կդրսևորեն՝ անկախ դպրոցական փորձառությունից:
- Երեխաներն իրենց անհրաժեշտ ստեղծագործական փորձառությունը կարող են ստանալ ազատ խաղից և չհամակարգված գեղարվեստական աշխատանքներից:
- Ստեղծարար լինելու համար պարտադիր չէ բանիմաց կամ հմուտ լինել:

Երեխան ունի իր առանձահատուկ
տեսնելու , մտածելու և զգալու ունակությունները :
Չկա ավելի հիմար բան , քան փորձել փոխարինել դրանք մեր ունակություններով[1]:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Կրթության և դաստիարակության գործընթացում ստեղծագործ անհատականության ձևավորումը և զարգացումը ժամանակակից կրթական համակարգի կարևոր բաղադրիչներից է: Մեր օրերում ստեղծարարությունը հռչակված է մարդկային ցանկացած գործունեության անբաժանելի մաս: Որպես կրթության բարձրագույն նպատակ՝ սահմանվում է ինքնազարգացող, ստեղծագործաբար մտածող ու գործող սովորողի ձևավորումը, ով ունակ է ստեղծագործաբար մտածելու, անորոշության պայմաններում լուծում փնտրելու, իմաստավորելու և վերաիմաստավորելու, ինտելեկտուալ դժվարությունները հաղթահարելու: Ուսուցման արդյունավետությունը չափվում է ոչ միայն և ոչ այնքան սովորողի յուրացրած գիտելիքներով, որքան նրա ձեռք բերած կարողություններով՝ շեշտը դնելով արդյունքի վրա, այսինքն՝ ինչ կարող է նա անել: Այս խնդիրը լուծելի է դառնում, երբ ուսուցման ընթացքում վերաբաշխվում են հիմնական արժեքները: Ուսումնառության ընթացքում սովորողը պասիվ ընկալողից վերածվում է ակտիվ և գործուն մասնակցի,իսկ դասավանդողը հրաժարվում է սովորեցնողի, վերահսկողի, խրատողի իր դերից՝ դառնալով այդ գործընթացի կազմակերպող, խորհրդատու և որպես գործընկեր՝ սովորողի հետ մասնակցում է ամենատարբեր մտահղացումների քննարկման ու իրականացման աշխատանքներին:

[1] Ժ. Ժ Ռուսո

Մինչև այսօր ուսուցում – ուսումնառություն գործընթացում մենք ճանաչել ենք երկու կողմ՝ սուբյեկտ, այսինքն՝ ուսուցիչը, որը սովորեցնում է, և օբյեկտ՝ աշակերտը, որին սովորեցնում են: Իսկ ժամանակակից մանկավարժությունը նույն գործընթացում տարբերակում է երկու սուբյեկտ: Ուսումնառության ընթացքում թե՛ ուսուցիչը, թե՛ աշակերտը փոխգործուն հարաբերությունների մեջ են[2]:

Երբ հանդիպում ենք ծնողական համայնքի հետ և քննարկում խնդիրը, բացահայտում ենք, որ շատ ծնողներ կարծում են, թե ստեղծարարությունը կամ ստեղծագործականությունը բնածին օժտվածություն է: Կան ուսուցիչներ էլ, որոնք կարծում են, որ ստեղծագործականությունը բնորոշ է միայն հումանիտար առարկաներին, ուստի կիրառելի է միայն այդ առարկաների դասավանդման ժամանակ: Խնդրի լուծումը գտնելու համար առաջին հերթին պետք է հստակեցնել՝ ի՞նչ է ստեղծագործականությունը: Այն խելացիությա՞ն, տաղանդի, թե մեկ այլ՝ ժառանգականության արտահայտություն է:

Իմ կարծիքով՝ ստեղծագործականությունը մի կողմից մտածողություն է, մյուս կողմից՝ վերաբերմունք կյանքի նկատմամբ, այն նաև ունակություն է: Ուրեմն ինչպես զարգացնել այդ ունակությունը:

Փորձը ցույց է տալիս, որ երբ աշակերտը ներառվում է համագործակցային աշխատանքների մեջ, հնարավորություն է ստանում սովորելու և սովորեցնելու գործընթացի մասնակիցը դառնալու, զարգացնելու իր ինքնուրույնության, ինքնաճանաչման սահմանները, ինքնակազմակերպվելու և ձևավորելու ժամանակի արդյունավետ կառավարման հմտություն: Այսպիսի գործունեությունը զարգացնում է սովորողների կարծիք հայտնելու, նյութը բազմակողմանի և քննադատաբար ուսումնասիրելու, ինչպես նաև ստեղծագործական ու նորարար մոտեցումներ կիրառելու ունակություններ:

Իհարկե սկզբնական շրջանում սովորողների մասնակցությունը կամ ակտիվությունը հարցը տարբեր կողմերից քննարկելու և լուծումներ գտնելու ուղղությամբ սահմանափակ է: Նրանք հաճախ բավարարվում են մեկ պատասխան կամ պարզ մի ճանապարհ գտնելով, բայց երբ թիմային աշխատանքի հմտությունները զարգանում են , ձևավորվում է նաև բազմակարծություն: Անհրաժեշտ է աշակերտներին սովորեցնել

[2] Վ. Զաքարյան, Հ. Ափյան, Մանկավարժական միտք, Բազմաբնույթ մտածողության տեսության կիրառության հնարավորությունը ուսուցման գործընթացում, Երևան, 2014, էջ12:

դիտողականություն, ասել է թե՝ ինչ է կատարվում դասարանում, շրջապատում, դպրոցում:Դիտողականությունը զարգացնելու հմտությունը հանգեցնում է բանավոր խոսքի, ապա նաև գրագետ խոսքի զարգացմանը: Դիտողականությունը ստիպում է լինել ուշադիր, մտածել ու ինքն իրեն հարցեր առաջադրելու կարողություն զարգացնել: Աշակերտը սկսում է ավելի հաճախ ինքն իրեն հարցնել՝ «Ինչո՞ւ եմ ես սա կատարում», հարց, որից սկսում է բացահայտումների ճանապարհը: Ճիշտ ձևակերպված հարցը կամ հարցի ճիշտ ձևակերպումը ծնում է ենթադրություններ, արդեն եղած ենթադրությունների վերաբերյալ ՝ կասկածներ: Ամենատարբեր ենթադրությունները կասկածի տակ դնելով՝ կարելի է զարգացնել ինչպես խելացի հարց ձևակերպելու կարողություն, այնպես էլ՝ այդ հարցի համար դիրքորոշման ձևավորում: Եթե առաջադրվող հարցը ստեղծագործական կամ վարկածային պատասխան է ակնկալում, ապա այն աշակերտին կմղի յուրահատուկ պատասխանի որոնման, որն էլ կշարժի նրա երևակայությունը: Իսկ երևակայությունից ստեղծագործական միտք , այնքան էլ հեռու չէ:«Երևակայությունն ավելի կարևոր է, քան գիտելիքը»,- Ա.Էյնշտեյնի միտքը մղում է մեզ այն թեզին, որ ցանկացած հայտնի ստեղծագործության հիմքում երևակայական խաղ է ընկած կամ կարելի է ասել ՝ խաղի երևակայություն:Պրոֆեսոր Լյուիս Մինկինը կարծում է , որ ստեղծարար «խաղը» , աշխարհը նորովի տեսնելու ձգտումը երբեմն պայքար է մեզ ծանոթ զուգորդությունների ու մտածողության գրավչության դեմ: Երիտասարդներին պետք է դրդել հասկանալու նման «խաղի» կարևորությունը:

Երևակայությունը, ըստ էության, սերող, գեներացնող մտածողության ձև է, որը հնարավորություն է տալիս արդեն եղած իրավիճակը քննարկել նորովի, ստեղծել այլընտրանքային դրսևորումներ: Այդպիսի խաղից ուսուցիչ հաճախ նոր առաջադրանքներ կազմելու հնարավորություն է ստանում:

Ստեղծարարությունը կամ ստեղծագործական ունակությունների զարգացումը գործընթաց է, դասապրոցեսը ևս սստեղծագործական գործընթաց է, և մեծ հաշվով շահում է այն աշակերտը, որի ուսուցիչը չի վախենում նորարարություններից, ստեղծագործական որոնումներից, երևակայական խաղերից: Երևակայական խաղը ստիպում է աշխարհը ճանաչել մեկ այլ դիտանկյունից, որն էլ ձևավորում է «վերափոխման» ունակություն, կաղապարների փոփոխման միջոցով դատողություններ

անելու հնարավորություն: Շատ կարևոր է աշակերտին ստիպել, որ հավատա իր ուժերին՝ խրախուսելով նրան մղել հետազոտական կամ տեղեկատվական որոնումների, ինչն էլ իր հերթին կձևավորի պատասխանատվություն: Կարևոր է սովորեցնել աշակերտին ճիշտ բանավիճել, թույլ տալ նրան մինչև վերջ ասելու իր տեսակետը, եթե անգամ մտածում եք, որ այն ճիշտ չէ, կամ ձեզ դուր չի գալիս: Թույլ տվեք աշակերտին սխալվել, ապա միասին քննարկեք սխալվելու պատճառը:Երբ աշակերտը վերլուծում է իր սխալը կամ թույլ գաղափարը, մենք դեռ չգիտենք, ***թե ապագա ինչ լավ գաղափարների կամ ճիշտ պատասխանների սերմեր կան այդտեղ***:Թեկուզև սխալներով ,բայց ինքնուրույն մտածողությունն է , որ նրան կտանի ստեղծագործականության:

Ստեղծագործ մտքի կամ մտածելակերպի ձևավորման համար ամենաբարենպաստ գործունեությունը միջանձնային շփումներն են, ընդ որում՝ հակամարտությունների հաղթահարումը, ինչպես նաև մտքերի և քայլերի համեմատությունը: Այս գաղափարը խմբային աշխատանքի կազմակերպման ժամանակ հասկացնել է տալիս որոշ աշաակերտների, որ երբեմն անհրաժեշտ է պայքարել իրենց սեփական մտահղացումների, առաջարկությունների համար, մանավանդ այն դեպքում, երբ դրանք չեն համընկնում խմբի մնացած անդամների կարծիքներին: Սրան զուգահեռ պետք է նաև խորացնել այն կարծիքը, որ միշտ չէ, որ պետք է պնդել սեփական դիրքորոշումը, պետք է կարողանալ կողմնորոշվել, թե երբ արժե տարբերվել, իսկ երբ՝ համաձայնել:

Աշակերտների երևակայական և ստեղծագործական միտքը ձևավորելու կարևոր միջոց է գնահատումը, արժևորումը: Աշակերտը պետք է սովորի գնահատել մշակութային արժեքը, կարևորի հասարակական- քաղաքական ձեռքբերումների արժեքը, առաջնային նշանակություն տա դրանց վերաբերյալ գիտելիքների ձեռքբերմանը, ձգտի ունենալ սեփական դիրքորոշում:

Այցելությունները տարբեր թանգարաններ, պատկերասրահներ, ֆիլմերի դիտումը և քննարկումը, լուսանկարչական ցուցահանդեսների կազմակերպումը հնարավորություն է տալիս սովորողներին՝ հասկանալ այլ բացահայտումներ, այլ լուծումներ:Սա հետաքրքրություն և մոտիվացիա է ստեղծում՝ ստիպելով մտածել.«Իսկ ես կարո՞ղ եմ» ...

Փաստն այն է , որ հենց այս եղանակներով են աշակերտները բացահայտում աշխարհը, մտածում, հաղորդակցվում:

Ըստ Հովարդ Գարդների «Բազմակի մտածողության տեսության» (Գարդներ 1993) , առանձնացվում է մտածողության 7 ձև՝ լեզվաբանական, մաթեմատիկական, տարածական, զգայաշարժական, երաժշտական, միջանձնային և ներանձնային: Բնական է, որ կան մտածողության դասակարգման այլ ձևեր ևս, բայց ստեղծարար կրթության համար կարևոր է այն, որ բոլոր աշակերտները ունեն տարբեր կարողությունների համադրություն: Այս կարողությունները կյանքի ընթացքում կարող են և անշուշտ փոփոխվում են: Հենց մեր դասավանդման հիմքում պետք է լինի այն, որ ***յուրաքանչյուր աշակերտ մտածողության յուրօրինակ խճանկար ունի, իսկ միատեսակ դպրոցական կրթությունը անտեսում է այս տարբերությունները:***

Իմ անձնական ենթադրությունն այն է ,որ ստեղծարարության պակասը կամ իսպառ բացակայությունը մեր ***դպրոցներում մտավոր հարմարվողականությունը քաջալերելու պատճառով է***:Բավական է որևէ մեկը աչքի ընկնի իր առանձնահատկությամբ, կամ տարբերվի խմբից, բոլորի ջանքերը ուղղվում են նրան «ետ բերելու» գործընթացին:***Ուրեմն մոռացվում է խճանակարի գոյությունը:***

Ըստ Պլուտարքոսի՝ միտքը զարգացնող ուսուցման մոտեցումը ձևակերպվում է այսպես. «Պատանու գլուխը ոչ թե անոթ է, որը պետք է «լցնել» գիտելիքներով, այլ «ջահ», որը պետք է «վառել»՝ հատկապես կիրառելով հարցադրումների մեթոդը» :

Ուսուցման գործընթացը մեծ հաշվով հենված է հարցադրումների վրա, թե որքան հաճախ ենք մենք աշակերտին ստիպում հարցադրումներ անել, այդքան ավելի ենք մենք տանում նրան մի ճանապարհով, որը ինքնուրույն մտածողության ու ստեղծագործական աշխատանքի ուղի է կոչվում: Երբ հարցի պատասխանը որոնելիս ծնվում են նորանոր հարցեր ու ենթադրություններ, մենք պետք է հասկանանք, որ աշակերտը բացել է մի դուռ, որը նրան գիտելիքի և բացահայտումների աշխարհ է տանելու:Առաջադրանքի հետաքրքիր լինելու բաղադրիչը ձգողական մեծ ուժ ունի, դա կարող է իր շուրջ համախմբել ավելի ու ավելի մեծ թվով աշակերտների: Ինչպես Ջեյմս Ուայթսոնն է պնդում.«Ոչ մի հետաքրքիր նորույթ ի հայտ չի գալիս առանց համագործակցության», ուրեմն ինչպես

կընթանա հանձնարարության կատարման ընթացքը, կախված է հարցադրման նպատակից, ընդգրկման սահմաններից և հետաքրքրությունից: Շատ հնարավոր է , որ մի փոքրիկ հարցը ծավալվի և դառնա հետազոտական աշխատանքի հիմք: Ինչպես պարզվում է , շատ աշակերտներ սիրում են հարցի խորքային ուսումնասիրություն:

Երբ մենք որոշեցինք ընդլայնել մեր իմացության շրջանակները , Լեոնիդ Ենգիբարյանի մասին նյութեր հավաքելով, ընդամենը երեք աշակերտի հետաքրքրեց թեման, բայց աշխատանքի ընթացքում ավելացավ աշակերտների թիվը, ծնվեցին նոր առաջարկություններ, ի հայտ եկան նոր գաղափարներ, ի վերջո մենք կարողացանք փոքրիկ շնորհանդեսի գաղափարից անցում կատարել մեծ միջոցառման կազմակերպման մտքին, որը ունեցավ հիանալի ընդունելություն և ողջունվեց շատերի կողմից: Գտնում եմ, որ ստեղծարարության հրաշալի գործընթաց է նախագծային աշխատանքը որովհետև մեթոդի կենտրոնում սովորողն է, իսկ ուսուցիչը սահմանափակվում է մշակողի, համակարգողի, փորձագետի, խորհրդատուի դերով: Նախագծային աշխատանք իրականացնող ուսուցիչը պետք է զգուշանա անհարկի ուսուցողական կամ հրահանգավորող վերաբերմունքից, որով կարող է սահմանափակել աշակերտների ստեղծագործական գործունեությունը:

Որպես նախագծային մեթոդի վերջնարդյունք կարելի է համարել սովորողի ճանաչողական հմտությունների, սեփական գիտելիքներն ինքնուրույն ձևակերպելու, տեղեկատվական տարածքում կողմնորոշվելու, քննադատական և ստեղծագործական մտածողության ձևավորումն ու զարգացումը:

Դասավանդման ընթացքում հնարավորություն ունեցել եմ հետևելու կարճատև նախագծային աշխատանքների կատարման ընթացքին:Կարծում եմ, որ աշխատանքը շահում է, երբ աշակերտին սովորեցնում ենք համբերատարությամբ սպասել ավարտին, որովհետև կյանքի կարևոր դասերից մեկն էլ պարգևներին սպասել սովորելն է: Ցանկացած աշխատանք պետք է բերկրանք պարգևի, առավել գնահատման և պարգևի անհրաժեշտություն ունեն ստեղծագործական աշխատանք կատարող աշակերտները: Շրջահայաց ուսուցիչը միշտ պետք է հիշի չափավոր, բայց սպասված խրախուսանքի կարևորությունը:

Ստեղծագործական մտքի ձևավորումը երկարատև և առաջին հայացքից անտեսանելի երևույթ է: Հաճախ ունենում ենք հուսահատության, հիասթափության այնպիսի րոպեներ, երբ մեզ թվում է, թե մեր աշակերտները չունեն ինչ-որ գաղափարից ոգևորվելու կամ խանդավառվելու կարողություն:Հենց այդ պահերին մեզ օգնության է հասնում այն միտքը, որ***ստեղծագործական միտքը ունի խորհրդավորություն, երբեմն էլ անտեսանելիէ առաջին հայացքից***:Անհրաժեշտ է ճիշտ պլանավորել գործընթացը:Ջ.Փիթին գտնում է , որ հուսահատվել պետք չէ, քանի որ գործընթացը շատ տարբերակներ կարող է ունենալ: Ստեղծագործական գործընթացը , ըստ Ջ. Փիփի, կազմված է ներշնչանքից, նախապատրաստումից, փոխակերպումից, խմորումից, պարզաբանումից և գնահատումից:

Ստեղծագործ արդյունքի արարման ժամանակ աշակերտը կարող է յուրաքանչյուր փուլում լինել մի քանի անգամ և բոլորովին էլ պարտադիր չէ, որ այս հերթականությունը խստորեն պահպանվի:Ուրեմն համբերատարությունը, չափավոր խրախուսանքը, անհարկի չմիջամտելը կարող են միայն դրական դեր խաղալ ստեղծագործական գործընթացի համար:

Ստեղծարարությունը լավագույնս մեկնաբանվում է ոչ թե իբրև անձին տրված կամ չտրված եզակի ունակություն, այլ իբրև բազմակողմանի կարողություն: Կրթական ստեղծարարության նոր գաղափարախոսություն կարելի է դարձնել լորդ Սթոունի հետևյալ ձևակերպումը.«Մարդիկ կարծում են, թե ես՝ որպես նորարար, օրենքներ եմ խախտում: Բնավ էլ ո՛չ. Ինձ դուր ենգալիս օրենքները, ես պարզապես սիրում եմ դրանք սրբագրել»:

Ելնելով այց գաղափարից՝ կարելի է մտածել, որ ստեղծագործական մտքի զարգացումը կարելի է սկսել ազատություն և վերահսկում հիմնարար ուղղություններով: Ընդ որում ՝ ազատություն չի նշանակում անպատասխանատվություն: Փորձարկելու ազատություն, համատեղ քննարկումներ, տեսածը և կարդացածը վերաիմաստավորելու, վերափոխելու կարողություն: Հարկավոր է ընդունել, որ ստեղծարար գործընթացի բուն էությունն ազատության և վերահսկողության փոխկախվածությունն է: Կա ևս մեկ մոտեցում, որը ստեղծարարությունը դիտարկում է ամբողջությամբ անհատական գործընթաց:Սակայն պետք է ընդունել, որ շատերի համար ստեղծագործական ձեռքբերումը միշտ բխում է այլ անձանց գաղափարներից, նվաճումներից, գրքերից, տեսություններից,

բանաստեղծություններից և այլն: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ անգամ հայտնի բանաստեղծները, արվեստագետները իրենց ճանապարհի սկզբում կրել են այս կամ այն ստեղծագործողի, հայտնի մարդու գաղափարների ազդեցությունը և հետո միայն գտել են իրենց ճանապարհը: Այնպես որ, ստեղծագործական մտքի զարգացման անսպառ աղբյուր կարելի է համարել անցյալի փորձի ուսումնասիրությունը, երկխոսությունը անցյալի հետ, քննարկումները, վերլուծությունները, մշակութային արժեքների վերաիմաստավորումը, նորովի բացահայտումներն ու մեկնաբանությունները: Այսպիսի գործընթացի համար անփոխարինելի առաջադրանքներ են որևէ պատմության համար ավարտ գրելը, արդեն հայտնի ավարտի փոփոխությունը, միայն մեկ նախադասությամբ գաղափարի ձևակերպումը, ստեղծագործության ձևի կամ ոճի, լեզվի կամ պատմելաձևի փոփոխությունը:Աշակերտի միտքը անսպասելիորեն կարող է այնպիսի անհնարին շերտեր բացել, որ ուսուցիչն էլ ցանկանա այդպիսի նորանոր առաջադրանքներ կազմել: Հատկապես արժեքավոր են այն հանձնարարությունները, երբ աշակերտը գրում է այն ստեղծագործության համար լուծման նոր տարբերակ, որը նրան չափից դուրս է հուզել: Աշակերտի ձգտումը՝ գերազանցել հեղինակին, այնքան ներշնչող է , որ ուսուցիչը անսպասելիորեն կարող է նույնիսկ տեսնել ստեղծագործողի մտքի աշխատանքը: Իմ աշխատանքի ընթացքում ունեցել եմ այդպիսի դիտարկումների բազմաթիվ փորձեր, պատմվածքների վերջաբանի անսպասելի տարբերակներ ու լուծումներ: Ամենից շատ ինձ բերկրանք են պատճառում արդեն չափահասության շեմին հասած տղաների հորինած պատմությունները, որոնք իրենց զուսպ բառապաշարի մեջ ավելի մեծ զգացմունք ու ապրում են պարունակում:

Վերջին տարիների ցավալի դեպքերը աշակերտներին թեմայի ընտրության բազմազանությունից շեղել ու տարել են այնտեղ, ուր վերջին ժամանակներս վճռվում է հայրենիքի ու իրենց սերնդակիցների ճակատագիրը:Հիմա եմ հասկանում մեր գրողներից շատերի «սուր և գրիչ» արտահայտության ամբողջական խորությունը. Ժամանակը թելադրում է իր թեմաները, և մենք պետք է պատրաստ լինենք աշակերտի հետ երկխոսելու, բանավիճելու, լսելու և հասկանալու: Համոզված եմ, որ յուրաքանչյուր աշակերտ ընկալումների իր յուրահատկությունն ունի, այդ է պատճառը, որ ստեղծագործական մտքի հայտնաբերումը երբեմն շատ է

դժվարանում: Համենայն դեպս ես համաձայն չեմ, որ ստեղծագործական միտքը դաստիարակել կամ զարգացնել չի լինի.« այն կամ կա, կամ՝ ոչ» մտքին, այդ պատճառով էլ իմ աշխատանքների կամ հանձնարարությունների մեջ միշտ կա ստեղծագործականության բաղադրիչ: Երբ առաջին անգամ աշակերտներին հանձնարարեցի տրված թեմայով մի հետաքրքիր նյութ նախապատրաստել, ներկայացման մի նոր ձև մտածել, հասկացա, որ միայն հանձնարարելը և դրա մասին տրված բացատրությունը դեռևս չի նշանակում, որ այն կարվի իմ ուզածի կամ երևակայածի նման: Հարցի լուծման մի տարբերակ ծնվեց պատահաբար.մեր այգում մայր կատուն սովորեցնում էր իր ձագուկներին ծառ բարձրանալ. Սկզբում ինքը բարձրանում էր, իջնում, ապա սպասում էր, որ նույնը կրկնեն ձագուկները:«Փորձի, լավագույն փորձի օրինակը»,- ծագեց իմ մտքում: Հաջորդ օրը աշակետներին ներկայացրի իմ հանձնարարած թեմայի վերաբերյալ արդեն եղած լավագույն օրինակներ, մի քանի օր հետո ստացա առաջին աշխատանքները: Ճիշտ է՝ դրանցից շատերը նման էին իմ ցույց տված օրինակին, բայց կային նաև բոլորովին այլ աշխատանքներ, ինչը ինձ համոզեց, որ ես ճիշտ եմ ընտրել ճանապարհը: Ուրեմն ստեղծագործական ներշնչանք կարող է առաջացնել լավագույն փորձի օրինակը, տեսած որևէ գեղեցիկ ֆիլմը, երգի կատարումը, բնության չքնաղ տեսարանը և ընդհանրապես, միշտ և ամենուրեք կարելի է տեսնել և ապրել ներշնչանքով լի պատկերներ: Անհրաժեշտ է աշակերտներին սովորեցնել ստեղծագործական աշխատանքի որոշ առանձնահատկություններ, որոնք միայն կօգնեն նրանց զարգացնելու իրենց միտքը: Աշակերտին պետք է սովորեցնել գրառումներ անելու տեխնիկան:Մտքում ծագած առաջին միտքը, ձևակերպված ինչ-որ նախադասություն, կարդացած կամ լսած խելացի արտահայտության գրառումը կարող է ստեղծարարության հիմք հանդիսանալ: Ես այդպիսի աշխատանքը համարում եմ զարգացնող և զարգացող գործընթաց:Այդպիսի մի փորձ կատարեցի բոլորովին վերջերս:

Գրի էի առել հանրահայտ մարդկանց ոչ այնքան ծամծմված մտքեր և տարել դասարան:Առաջարկեցի աշակերտներին՝ ընտրել որևէ միտք և մտածել այդ մտքի շուրջ որոշ ժամանակ:Այնուհետև թեմայի վերաբերյալ ունեցանք շատ կարճ քննարկում և մտքերի փոխանակում: Որոշեցի հանձնարարության վերջնաժամկետը և առաջարկեցի ներկայացնել կատարված աշխատանքները ծնողների և հյուրերի ներկայությամբ: Ասել, որ այդ օրը

հուզված էին բոլորը, նշանակում է չասել ոչինչ:Ես տեսնում էի իմ աշակերտների ծայրահեղ լարվածությունն ու լրջությունը, անհամբեր էի շատ, որովհետև երեք տարի սպասել էի այսպիսի աշխատանք տեսնելու: Ճիշտ կլինի, եթե ասեմ, որ երեք տարի, ես քննարկել էի շատ աշխատանքներ, օգնել էի միասին գտնելու արտահայտման ճիշտ ձևեր, լսել ու շտկել էի քննարկումների ժամանակ ասված շատ մտքեր...Եկել էր պահը, երբ ամեն ինչ ինձ համար անհայտ էր ու խորհրդավոր, և ես իմ աշակերտներին պետք է տեսնեի մի նոր լույսի ներքո:Հանկարծ հասկացա, որ ինձ նման, գուցե նաև ինձնից առավել հուզված են նաև ծնողները:

Երբ քննարկումն ավարտվեց, շատ ծնողներ մոտեցան ինձ և հուզված ձայնով, կուլ տալով արցունքները, հայտնեցին շնորհակալություն: Գերիշխողը մեկ նախադասություն էր.«Ես իմ երեխային չէի ճանաչում»:

Ես այդ օրը մեկ անգամ ևս հասկացա, որ անհատական աշխատանքի իրականացման ժամանակ ուսուցման գործընթացի կենտրոնում սովորող անհատն է, իր պատասխանատվությամբ, իր ընկալումներով, աշխարհը բացահայտելու իր կարողություններով, և ինչ ընթացք կստանա աշխատանքը, կախված է նրա հոգում ծլարձակող սերմերից, որոնք ես էի շաղ տվել մեծ համբերությամբ՝ երեք տարիների իմ ամենօրյա աշխատանքով:

Ստեղծագործական մտքի և երևակայության մեծ բաղադրիչ ունի իր մեջ դերային խաղը: Շատ եմ մտածել այդ մասին, բայց ինձ միշտ վախեցրել է այն,որ ավագ դպրոցի աշակերտը կարող է խուսափել `խաղը համարելով՝ դա մանկական զվարճանք է : Այնուամենայնիվ դասավանդման ընթացքում մտքումս ծագեց մի համարձակ գաղափար՝ առջարկել աշակերտներին հայոց լեզվի գործառական ոճերը ներկայացնել դերախաղի միջոցով այնպես, որ մյուս խմբերը կռահեն ոճի անունը:Երբեք չէի մտածել, որ խաղը այսքան կներշնչի ու կհետաքրքրի , կմղի համարձակ քայլերի:Երբ աշակերտները հաջողությամբ ներկայացրին, իսկ մյուսներն էլ գուշակեցին, հանգեցի այն մտքին, որ հաճախ մենք մեր վախերով, անհարկի զգուշավորությամբ ու կասկածներով հենց կարող ենք խանգարել ստեղծագործ մտքի զարգացմանն ու ինքնաարտահայտմանը:

Ի՞նչ ազդեցություն կարող է ունենալ կրթական միջավայրը ստեղծարարության վրա:

Ըստ Մելոուի՝ աշակերտների ստեղծարարությունը կրթական միջավայրում կարելի է զարգացնել հետևյալ երեք միջոցներով՝ ստեղծարար ծրագրեր, ստեղծագործ ուսուցիչներ և դասավանդման մեթոդներ:

***Ստեղծարար միջավայր-** առանցքային է երեխաների խաղի խրախուսումը:

Ըստ Փրենթիսի՝ ակտիվ ներգրավվածությունն էական գործոն է. «Կրթական միջավայրում ստեղծարարության կատարելագործման համար սովորողները պետք է ակտիվ ներգրավված լինեն իրենց սեփական ուսումնառության գործընթացում»:

Ըստ Ռանկոյի՝ կարևոր խթան է երեխայի ֆիզիկական միջավայրը, այդ թվում՝ դասասենյակի ու բակի չափը և նախագիծը, սարքավորումների և նյութերի որակը, տարբերվող, նոր միջավայրի հասանելիությունը: Երկրորդ գլխավոր հիմնախնդիրը երեխաներին սեփական ստեղծագործական նախագծերի մշակման համար բավարար, երկարատև ժամանակ հատկացնելն է:

Ստեղծարար ծրագրեր- դասավանդման որոշ, այդ թվում՝ արվեստին ներհատուկ ծրագրերի միջոցով հնարավոր է զարգացնել երեխաների ստեղծարար հմտությունները:

Ստեղծագործ ուսուցիչներ և ստեղծարար դասավանդում- մանկահասակ երեխաների ստեղծարարության խթանման էական մասն են կազմում:

Ուսուցիչները և վաղ մանկության տարիներին երեխաների հետ աշխատող այլ անձիք կարող են առաջ մղել ստեղծարարությունը հետևյալ միջոցներով՝

- տալով բաց հարցեր,
- հանդուրժելով անորոշությունը,
- հանդիսանալով ստեղծագործ մտածողության և վարքագծի օրինակ,
- քաջալերելով փորձարարությունը և հաստատակամությունը,
- գովեստի արժանացնելով յուրօրինակ պատասխաններ տվող աշակերտներին:

Այնուամենայնիվ, հարկ է շեշտել, որ ես դասավանդման իմ փորձառության մեջ բնավ չեն ստորադասում դասավանդման ավանդական մեթոդները, ինչպիսիք են պատմելը, բացատրելը, դասախոսությունը, հարցուպատասխանը: Հաճախ ուսուցման մեթոդներն ընկալվում են որպես դեղատոմս: Երբեմն նշվում է, որ այս

կամ այն մեթոդը կիրառելու դեպքում մենք կկարողանանք հասնել մեր նպատակին, որ մանկավարժության մեջ ընդհանրացված լուծումներ չկան: Սակայն գիտենք, որ յուրաքանչյուր դաս, յուրաքանչյուր դասարան տարբեր է, և մեկ դասարանում աշխատող մոտեցումը կարող է մի այլ դասարանում չաշխատել[3]: Հետևաբար սովորողի ստեղծագործական մտքի և նախաձեռնողականության զարգացման համար արդի պայմաններում դասավանդման մեջ առանցքային դերակատարում է ստանում ՏՀՏ գործիքների կիրառումով դասը վարելը: Նորագույն տեխնոլոգիաներով հագեցած դասերն ունակ են սովորողների մեջ առաջացնել հետաքրքրություն կրթական պարտադիր ծրագրերով նախատեսված առարկաների հանդեպ: Սովորողը, օգտվելով իրեն հարմար համացանցային հարթակից կամ գործիքից, ինքնուրույն կարող է ուսուցանվող թեմայի շուրջ տեղեկատվություն հավաքել, հետազոտել, ծանոթանալ առցանց առաջարկվող ուսումնաօժանդակ նյութերին: Արդյունքում համացանցը սովորողի համար դառնում է գործիք, որի օգնությամբ վերջինս հեշտությամբ կարողանում է կառավարել իրեն անհրաժեշտ տեղեկատվական հոսքերը:

ՏՀՏ միջոցների կիրառումը իրապես շոշափելի ազդեցություն ունի մանկավարժների աշխատանքի ինտենսիվության, ինչպես նաև աշակերտների ուսուցման արդյունավետության վրա: Ժամանակակից դպրոցի սովորողների գիտելիքների ձեռքբերման և մանկավարժների մասնագիտական որակների բարձրացման հիմնական խնդիրներից մեկը նրանց արհեստավարժության մեծացումն է ՏՀՏ-ի օգտագործման ոլորտում: Կրթական համակարգում տեխնոլոգիաների ներդրումը մեծ հնարավորություններ է տալիս բարելավելու և կատարելագործելու մանկավարժական մեթոդները ոչ միայն փորձի փոխանակման և ստեղծագործական գործունեության ընթացքում, այլ նաև գործնական խնդիրների լուծման ժամանակ, որոնց համար հիմք են ուսումնամեթոդական նյութերի կուտակումը, դպրոցի ներքին տեղեկատվական տեխնոլոգիաների և ինտերնետ-տեխնոլոգիաների օգտագործումը մանկավարժների և աշակերտների կողմից: ՏՀՏ-ի օգտագործումը ուսուցչին մեծ հնարավորություններ է ընձեռում առարկայի ուսուցման ժամանակ: Այսպիսով, ՏՀՏ գործիքների կիրառումը դասապրոցեսը դարձնում է ավելի ակտիվ, սովորողն ավելի

[3] https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, 2020, էջ 22

հետաքրքրությամբ է մասնակցում դասին՝ ցուցաբերելով ինքնուրույն հետազոտելու և նախաձեռնողի դերում հանդես գալու ցանկություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր երեխայի կարող է վերագրվել ստեղծագործ ներուժ և ստեղծագործականության արտահայտման ունակություն: Յուրաքանչյուր երեխայի ստեղծարար ունակությունները կարող են դիտարկվել նրա անհատական զարգացման փուլի համատեքստում: Ստեղծարարությունն առավել տեսանելի է դառնում այն ժամանակ, երբ մեծահասակները փորձում են ուշադրություն դարձնել ոչ թե գործողությունների և հասկացողության տարբեր ոլորտներում երեխաների գրանցած արդյունքներին, այլ վերջիններիս ճանաչողական գործընթացներին:

Ամեն ինչի հիմքում դրված է ազատության գաղափարը: Վստահել երեխային, հնարավորություն տալ նրան ընտրելու կրթության սեփական ուղի, օգնել նրան սեփական ճանապարհն անցնելու՝ նպաստում են սովորողների ճանաչողական և ստեղծագործական ունակությունների, մտածողության զարգացմանը: Այսինքն՝ ուսուցման գործընթացի կազմակերպման նոր ձևերը, մեթոդները և տեխնոլոգիաները ճիշտ և տեղին կիրառելը կնպաստեն մարդու ինքնուրույնության ձևավորմանը, հիմնարար գիտելիքների ձեռքբերմանն ու ստեղծագործական կարողությունների զարգացմանը, ինչը այսօր արդիական ու խրախուսելի է համակողմանի զարգացած անհատականություն ձևավորելու գործում:

Նախաձեռնողականությունը, ստեղծարարությունը, ինքնուրույնությունը, որոնք նաև ինքնաճանաչման լայն հնարավորություն են տալիս սովորողին, արդի կրթական համակարգի և առհասարակ կյանքի այլ ոլորտների համար պարտադիր բաղադրիչ է :Հետազոտելով տրված թեման,սահմանելով խնդիրն ու դրանից բխող նպատակները՝ կատարեցինք հետևյալ եզրահանգումները.

- ստեղծարարության զարգացման գործում առանցքային դեր ունի հանրակրթական ուսումնական հաստատությունը
- ստեղծարարության և ստեղծագործական մտքի բնականոն զարգացումը մեծապես կապված է ուսուցչի աշխատանքից՝ դասի պլանավորումից մինչև մեթոդների ու հնարների ընտրություն
- կրթության ոլորտի արդի բարեփոխումները մեծապես նպաստում են սովորողների մեջ հետազոտական ու ստեղծարարության ունակություններ

զարգացնելու, ինչպես նաև հնարավորությունները դպրոցում նման ունակություններ ձեռք բերելու և զարգացնելու:

Ստեղծարարությունը կարևոր մարդկային հատկանիշ է:

- Երեխաները խաղի միջոցով կարող են մշակել սեփական հմտությունները
- Դրսևորել ստեղծագործ վարքագիծ և գովեստի արժանացնելով երեխաների ստեղծագործական ջանքերը, զարգացնել նրանց երևակայությունը
- Երեխայի հետաքրքրությունները բացահայտելը և հզորացնելը կարևոր մեկնարկային դրույթ է
- Երեխաների հետ աշխատողները կարող են աջակցել՝ ուշադրություն դարձնելով նրանց վարքագծին՝ պարզելով դժվարության պատճառները և մշակելով համապատասխան գործողությունների ծրագիր:

Այսպիսով՝ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՍ ուզում եմ ավարտել մեծ մանկավարժ Վ. Ա. Սուխոմլինսկու խոսքերով. «Дети должны жить в мире красоты, игры, сказки, музыки, рисунка, фантазии, творчества»:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Վ. Զաքարյան, Հ. Ափյան, Մանկավարժական միտք, Բազմաբնույթ մտածողության տեսության կիրառության հնարավորությունը ուսուցման գործընթացում,Երևան, 2014:

2. Մ. Զ. Հակոբյան, Գ. Ռ. Պետրոսյան, Վ. Ա. Մանուկյան, «ՏՀՏ-ի օգտագործումն ուսուցման գործընթացում»:

3.https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, 2020:

4. Շմոջի Եդիտ, Ֆուչ Գեորգի, (2006թ.), 101 *գաղափար նորարարական մեթոդներ կիրառող ուսուցիչների համար*, Բուդապեշտ

5. Սպենսեր Կագան,(1985թ.)*Հմագործակցային ուսուցում*, Սան Կլեմենտե, Կալիֆորնիայի նահանգ

6. Богданов В. А., (2016г.)*Вовлеченность в учебной процессе*

7. Наталья Киреева, (2016 г.) *Загадка финской школы*, пресса, Хельсинки

8. Е.Ю. ЛИТВИНОВА, Н.В. КИСЕЛЕВА (2016г.) *Структурная модель вовлеченности обучаючихся в непреривное образование*, Москва, Россия

9. Уваров А. Ю.,(2001г.)*Группавая работа*, часть 2, Изд-во МИРОС

Активные методы обучения рекомендации по разработке и применению, 2017.

10. ДЖЕФФ ПЕТТИ, (2010г) *СОВРЕМЕННОЕ ОБУЧЕНИЕ*, МОСКВА, изд. Ломоносовь

11. Johnson D. W, Johnson R. T. and Holubee E.J. (1983)Cooperation in the Ciassroom.

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Ստեղծագործական կարողություններ	
1	մտքի սահունություն (գաղափարների քանակը)
2	մտքի ճկունություն (մի գաղափարից մյուսին անցնելու ունակություն)
3	ինքնատիպություն (գաղափարներ ստեղծելու ունակություն)
4	հետաքրքրասիրություն
5	Երևակայություն

Ստեղծագործությունը խթանելու ուղիներ	
1	բարենպաստ մթնոլորտի ապահովում, ուսուցչի կողմից բարի կամք, երեխային քննադատելուց նրա հրաժարումը
2	երեխաներին ակտիվորեն հարցեր տալու հնարավորություն տալը
3	երեխայի միջավայրի հարստացում նոր առարկաների և խթանների լայն տեսականիով, որպեսզի զարգացնի նրա հետաքրքրասիրությունը.
4	գաղափարների արտահայտման խրախուսում
5	խնդիրներ լուծելու ստեղծագործական մոտեցման անձնական օրինակի օգտագործումը
6	պրակտիկայի հնարավորությունների ապահովում

Ստեղծագործական կարողությունների զարգացման մակարդակի գնահատում	
1	**ուշադրություն**(ստեղծագործական խնդիրը տեսնելու և բացահայտելու կարողություն)
2	**ճկունություն**(ստանդարտ տեսակետի մերժում)
3	**ինքնատիպություն**(կաղապարի մերժում)
4	**փոփոխականություն**(գաղափարները և կապերը վերախմբավորելու ունակություն)
5	**կոնկրետություն**(առաջադրանքը խորապես վերլուծելու ունակություն)
6	**Վերացականություն** (սինթեզելու ունակություն)
7	**ներդաշնակություն**(կազմակերպչական ներդաշնակության և գաղափարական ամբողջականության վրա հիմնված գաղափարների առաջացում)
8	**անկախություն**(ուրիշի կարծիքի ազդեցության տակ դատողություններ և գնահատականներ չընդունելը)
9	**ընկալման բացություն**(նոր, անսովոր զգայունություն)
10	**բազմակողմանիություն**(առաջադրանքի մեջ ավելի շատ կողմեր և կապեր նկատելու ունակություն)

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Ստեղծագործական ունակությունների զարգացմանը նպաստող մոտեցումներ

Ոչ ստանդարտ դասերը դասավանդման արտասովոր մոտեցումներ են: Նրանց նպատակը չափազանց պարզ է՝ վերակենդանացնել ձանձրալին, գրավել ստեղծագործությամբ:Ոչ ստանդարտ դասերին բոլորը հնարավորություն են ունենում իրենց դրսևորել հաջողության մթնոլորտում, և դասարանը դառնում է ստեղծագործական թիմ: Այս դասերը ներառում են մեթոդների ամբողջ բազմազանությունը, հատկապես, ինչպիսիք են խնդրի վրա հիմնված ուսուցումը, որոնման գործողությունները, միջառարկայական և ներառարկայական հաղորդակցությունները և այլն: Լարվածությունը թուլանում է, մտածողությունը՝ աշխուժանում, ոգևորվում, և մեծանում է հետաքրքրությունն ընդհանուր առարկայի նկատմամբ:

«Հայոց լեզու» և հատկապես «Գրականություն» առարկաների դասավանդման ժամանակ ոչ ստանդարտ դասերի վարումը օժանդակում է երեխաների լեզվական հաղորդակցման հմտությունների զարգացմանը և նրանց անհատական ստեղծագործական կարողությունների բացահայտմանը, այսինքն՝ նպաստում են սովորողների մայրենի լեզվով գրագետ հաղորդակցվելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու, ինքնադրսևորվելու, գնահատելու և այլ կարողությունների ու հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը : Աշխատանքի այս տեսակն ակտիվացնում է սովորողների մտավոր և խոսքային գործունեությունը, զարգացնում նրանց երևակայությունը, ստեղծագործական մտածողությունը, հետաքրքրությունը և՛ առարկայի, և՛ մատուցվող թեմայի նկատմամբ:

Հայոց լեզվի և գրականության դասավանդման առավել արդյունավետ և կիրառելի ոչ ստանդարտ դասի տեսակներ են՝

- **Դաս – խաղերը**
- **Դասեր՝ մրցույթներ, վիկտորինաներ**
- **Դաս- Ի՞նչ. Որտե՞ղ, Ե՞րբ**
- **Դաս- «Կլոր սեղանի շուրջ»**
- **Դաս – սեմինար**

- **Դաս – թեստ**
- **Կատարողական դաս**
- **Դաս – հարցազրույց**
- **Դասի շարադրություն**
- **Դաս - հեքիաթներ, դաս - ճամփորդություն**
- **Դաս – դատարան**
- **Դաս – աճուրդ**
- **Դաս - գիտելիքների փոխանակում**
- **Նախագծերի մեթոդ**
- **Դաս - էքսկուրսիա**

Դաս-խաղերի մեթոդի էությունը խաղի և աշխատանքի սինթեզումն է, որի ուսումնական նպատակը նման է խաղային առաջադրանքի, և դասը ենթարկվում է խաղի կանոններին, դպրոցականների կողմից պարտադիր ոգևորությանը և բովանդակության նկատմամբ հետաքրքրությանը: Նման դասերին ստեղծվում է դրական, ոչ ձևական մթնոլորտ, խաղերը զարգացնում են սովորողների ինտելեկտուալ և հուզական ոլորտը:

Դաս-մրցույթներ,վիկտորինաներ անցկացվում են լավ տեմպերով և թույլ են տալիս ստուգել սովորողների մեծ մասի գործնական և տեսական գիտելիքները ընտրված թեմայի վերաբերյալ: Խաղեր - մրցույթները կարող է հորինել ուսուցիչը կամ լինել հայտնի հեռուստատեսային մրցույթների վարողը:

Դաս - «Ի՞նչ. Որտե՞ղ, Ե՞րբ» մեթոդի կիրառման ժամանակ աշակերտների մի խումբ նախօրոք բաժանվել է երեք խմբի, բաժանվել են տնային առաջադրանքներ, պատրաստվել թիմերի համարներ, ավագների համար խաղացողների անուններով թերթիկներ: Խաղը բաղկացած է վեց փուլից.

1. Ուսուցչի ներածական խոսքը:
2. Ջերմացում - թեմայի բոլոր առանցքային հարցերի կրկնություն:
3. Սահմանեք հարցի մասին մտածելու ժամանակը և պատասխանի համար միավորների քանակը:
4. Խաղ «Ի՞նչ. Որտե՞ղ. Ե՞րբ»
5. Ամփոփում:
6. Ուսուցչի եզրափակիչ խոսքը

Դաս «Կլոր սեղանի շուրջ» մեթոդը կոլեկտիվ քննարկման հնար է, որը սովորեցնում է անկախությանը, ակտիվությանը, իրադարձություններին պատկանելու զգացմանը:Նախապես ընտրվում է թեմայի խնդիրների վերաբերյալ առաջնորդ և 5-6 մեկնաբան: Ուսուցիչը ներկայացնում է ներածական մասը, ընտրվում են թեմայի հիմնական ուղղությունները, ապա սովորողներին առաջարկում է հարցեր, որոնց լուծումը կախված է ամբողջ խնդրի լուծումից: Վարողը շարունակում է դասը, նա խոսքը տալիս է մեկնաբաններին, ամբողջ դասարանին ներգրավում է քննարկման:

Դաս - սեմինար հնարը կիրառվում է թեմայի, բաժինների ավարտից հետո: Սեմինարի հարցերը տրված են նախապես՝ արտացոլելով այդ բաժնի նյութը և միջառարկայական կապը: Առաջադրված հարցերի սպառիչ պատասխանները լսելուց հետո ուսուցիչը ամփոփում է դասը և նպատակադրում է սովորողին նախապատրաստվել դասին՝ թեստ այս թեմայով:

Դաս - թեստը իրականացվում է տարբեր ձևերով.

- Քննողները կարող են լինել ուսուցիչներ
- Ավելի գիտուն, լավ սովորած աշակերտներ

Խմբային ուսուցման մեթոդ, որի կիրառման ժամանակ դասարանը բաժանվում է խմբերի, խմբում նշանակվում է խորհրդատու, յուրաքանչյուր խումբ ստանում է առաջադրանք, առաջին օրինակը լուծում և բացատրում է խորհրդատուն, հետո սովորողները կատարում են ինքնուրույն: Խորհրդատուները գրառումներ են անում, համակարգում և պահում: Ուսուցիչը բոլորի աշխատանքը վերահսկում է, վերջում կազմում ամփոփագիր:

Արդյունավետ մեթոդներից է **«Կատարողական դաս»-ը:** Պատրաստվում է ներկայացում, որը նպաստում է երեխաների լեզվական հաղորդակցման հմտությունների զարգացմանը և նրանց անհատական ստեղծագործական կարողությունների բացահայտմանը: Աշխատանքի այս տեսակն ակտիվացնում է սովորողների մտավոր և խոսքային գործունեությունը, զարգացնում նրանց հետաքրքրությունը առարկայի նկատմամբ:

Դաս - հարցազրույցը երկխոսության, տեղեկատվության փոխանակման տեսակ է, պահանջում է զգույշ նախապատրաստություն, սովորողները ինքնուրույն աշխատում են առաջադրանքի վրա՝ ըստ

ուսուցչի առաջարկած գրականության, պատրաստում են հարցեր, որոնց պատասխանները ցանկանում են ստանալ:

Դասի շարադրությունը տպավորությունների, մտքերի, ասոցիացիաների պատկերի վերարտադրումն է, զարգացնում է սովորողների մտավոր գործառույթները, տրամաբանական և վերլուծական մտածողությունը:

Դաս - հեքիաթներ, դաս – ճամփորդություն: Մեթոդը կիրառելիս պետք է ապավինել երեխաների երևակայությանը և զարգացնել այն: Հեքիաթների դասեր անցկացնելը հնարավոր է երկու տարբերակով.

- երբ հիմք է ընդունվում ժողովրդական կամ գրական հեքիաթը
- կազմում է հենց ուսուցիչը:

Հեքիաթի ձևը մոտ և հասկանալի է հատկապես փոքր և միջին տարիքի երեխաների համար, բայց ավագ դպրոցի աշակերտները ևս հետաքրքրությամբ են արձագանքում նման դասին:

Դաս - դատարան, դաս - աճուրդ –սովորողներին տրվում են խնդրի որոնման առաջադրանքներ, նրանց տրվում են ստեղծագործական առաջադրանքներ, այս դասերը նաև կարիերայի ուղղորդող դեր են խաղում, դրսևորվում է դպրոցականների արտիստիզմը, մտածողության ինքնատիպությունը:

Դաս-աճուրդի մեթոդը գաղափարների «աճուրդ» է: «Աճուրդի» մեկնարկից առաջ փորձագետները որոշում են գաղափարների «վաճառքի արժեքը»: Ապա գաղափարները «վաճառվում են», հաղթող է ճանաչվում ամենաբարձր գին ստացած գաղափարի հեղինակը և գաղափարը գնում է այն մշակողների մոտ, ովքեր արդարացնում են իրենց տարբերակները: Աճուրդը կարող է անցկացվել երկու փուլով և երկրորդ փուլ անցած գաղափարները կարող են փորձարկվել գործնական խնդիրների մեջ:

Դաս-էքսկուրսիան արդիական և կիրառելի է բոլոր ժամանակներում և բնագավառներում: Ծանոթացնելու, զարգացնելու, արժեքային համակարգը հարստացնելու արդյունավետ մեթոդ է:

Նախագծային մեթոդը վերջին տարիներին ավելի ու ավելի շատ կողմնակիցներ է ձեռք բերում: Այն նպատակաուղղված է զարգացնել երեխայի ինքնուրույն մտածողությունը, սովորեցնել նրան ոչ միայն անգիր անել և վերարտադրել այն գիտելիքները, որոնք նրան տալիս է դպրոցը, այլ նաև կարողանալ դրանք կիրառել գործնականում: Ծրագրի

մեթոդոլոգիան առանձնանում է նախագծի վրա աշխատելիս առաջադրանքների կատարման համագործակցային բնույթով, միաժամանակ իրականացվող գործունեությունը բնածին ստեղծագործական է և կենտրոնացած է սովորողի անձի վրա: Նախագծի թեման ընտրելիս ուսուցիչը պետք է կենտրոնանա սովորողների հետաքրքրությունների և կարիքների, նրանց հնարավորությունների և առաջիկա աշխատանքի անձնական նշանակության, նախագծի վրա աշխատանքի արդյունքի գործնական նշանակության վրա: Ավարտված նախագիծը կարող է ներկայացվել տարբեր ձևերով՝ հոդված, առաջարկություններ, ալբոմ, կոլաժ, զեկույց, գիտաժողով, մրցույթ, տոն, ներկայացում: Նախագծի վրա աշխատանքի հիմնական արդյունքը կլինի եղածի ակտուալացումը և նոր գիտելիքների, հմտությունների և կարողությունների ձեռքբերումը և նոր պայմաններում դրանց ստեղծագործական կիրառումը: Նախագծի վրա աշխատանքն իրականացվում է մի քանի փուլով և սովորաբար դուրս է գալիս դասարանում ուսուցման գործողություններից՝ թեմայի կամ նախագծի խնդրի ընտրություն, կատարողների խմբի ձևավորում, ծրագրի աշխատանքային պլանի մշակում, ժամկետների որոշում, առաջադրանքների բաշխում սովորողների միջև, առաջադրանքների կատարում, յուրաքանչյուր առաջադրանքի արդյունքների քննարկում խմբում, համատեղ արդյունքի գրանցում, ծրագրի հաշվետվություն, ծրագրի իրականացման գնահատում: Նախագծի մեթոդաբանության համաձայն աշխատանքը սովորողներից պահանջում է որոնողական գործունեության, իրենց գործողությունների համակարգման, ակտիվ հետազոտության, կատարողական և հաղորդակցական փոխգործակցության բարձր աստիճանի անկախություն: Ուսուցչի դերն է աշակերտներին նախապատրաստել նախագծին, ընտրել թեմա, աջակցել սովորողներին աշխատանքի պլանավորման հարցում, վերահսկել և խորհուրդ տալ սովորողներին ծրագրի ընթացքում: Այսպիսով, նախագծի մեթոդի հիմնական գաղափարը համատեղ ստեղծագործական աշխատանքի ընթացքում տարբեր տեսակի վարժություններից շեշտը տեղափոխելն է սովորողների ակտիվ մտավոր գործունեությանը:

Եվ ինչքան էլ մեթոդները շատ են ու տարբեր, այդուամենայնիվ ցանկացած ակադեմիական առարկայի իրական յուրացում անհնար է

առանց երևակայության ակտիվ գործունեության, առանց դասագրքում գրվածը, ուսուցչի ասածը պատկերացնելու ունակության, առանց տեսողական պատկերներով գործելու ունակության:

Այսպիսով, երեխայի երևակայությունը, ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը, ստեղծագործական ունակությունները զարգացնելու համար անհրաժեշտ է բացառապես պատշաճ առաջնորդություն: